ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10 սեպտեմբերի 2023թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 11 անդամները ։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1.2022-23թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում: /*ԴեկանԱմբիոնների վարիչներ*

2. Ֆակուլտետում ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների ներկայացրած թեմաների քննարկում/ դեկան, մասնակիցներ:

3. *Ֆակուլտետի 2023-24 ուս տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության հաստատում:/Դեկան*

4. <<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա >> մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում/ զեկ. Ամբիոնների վարիչներ

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 2/1

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝«2022-23թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը։

Նա ներկայացրեց ամփոփ տվյալներ լուծարքային շրջանի վերաբերյալ։

Արտահայտվեցին՝ *Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը։*

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 3/2

Ընդունել ի գիտություն

Օրակարգի երկրորդ՝ «Ֆակուլտետում ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների ներկայացրած թեմաների քննարկում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Ա.Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը:

Գ. Սիմոնյանը ներկայացրեց **«Տավուշի մարզի բենտոնիտի կիրառման բնապահպանական և տեխնոլոգիական նշանակությունը» թեմայով** նախագծի նպատակը: Նպատակին համահունչ նախատեսվում է բացահայտել Տավուշի մարզի բենտոնիտի որպես հողի լավարկիչ և պարարտանյութ օգտագործելու հնարավորությունները: Ներկայացնել կենցաղում, լվացող միջոցներում, թափոնաջրերի մաքրման գործընթացում և գինեգործության մեջ օգտագործելու նպատակով:

Ա. Հովակիմյանը ներկայացրեց «Պատկերի ճանաչման թվային անվտանգության համակարգի տեղադրում և վերահսկում» **թեմայով** նախագծի նպատակը: Նախագծի շրջանակում առաջարկվում է լուծում, որը հնարավորություն է տալիս տեսահսկել շենքի/շինության տարածքը՝ դեմքի ճանաչման վրա հենված մուտքի արտոնման եղանակով: Բոլոր հավաքագրված տվյալները պահվելու են բաց կոդերով ստեղծված տվյալների պահոցում, շենքի տարածքում տեղադրված սպասարկիչում, որի աշխատանքը չի խաթարվում նաև համացանցի խաթարման դեպքում: Լուծման առանձնահատկություններից մեկը հենց մատչելիությունն է՝ ճարտարագիտական և թվային անվտանգության ապահովման ջանքի և ծախսերի տեսակետից:

Արտահայտվեցին. *Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը:*

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ 3/3

Ընդունել ի գիտություն

Օրակարգի երրորդ՝ «*ֆակուլտետի 2023-24ուս տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության հաստատում*:

Մ. Զաքարյանի հաղորդումը հետևյալն է. 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում մանդատային հանձնաժողովի կողմից անվանական կրթաթոշակի են ներկայացվել հետևյալ ուսանողները

թիվ	Ա.Ա.Հ.	Կրթական ծրագիր	Կուրս	Կրթաթոշակի անվանումը
1	**Ինևա Հրայրի Հարությունյան**	**Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա**	**4-րդ**	**ԵՊՀ**
2	**Սվետլանա Կարենի Մելիքբեկյան**		**4-րդ**	**Համլետ Կարայան**
3	**Սահակ Գեղամի Գուլակյան**		**3-րդ**	**Նարեկ Բաղդասարյան**

Արտահայտվեցին - Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

Արտահայտվողները ներկայացրեցին, որ Ինևա Հարությունյանը , Սվետլանա Մելիքբեկյանը, Սահակ Գուլակյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանողներ են, գտնում են, որ արժանի են անվանական կրթաթոշակ ստանալուն:

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 3/4

Հաստատել 2023-24ուս տարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածությունը:

5. Օրակարգի չորրորդ՝ <<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա >> մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում, հարցի վերաբերյալ

Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Ի/ԿՄ 4-րդ կուրսի 12 ուսանողներ ընտրել են Ծ/ԻՏ ամբիոնի դասախոսների կողմից ներկայացված թեմաները: Ղեկավարները ներկայացրել են թեմաները անոտացիաների հետ միասին, ամբիոնում քննարկվել և ներկայացվում է գիտ.խորհրդի հաստատմանը:

Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ ԸՄԲ ամբիոնում ավարտական աշխատանք են կատարելու Ի/ԿՄ 4-րդ կուրսի 5 ուսանողներ: Ղեկավար դասախոսները ներկայացրել են թեմաները և անոտացիաները, ամբիոնում քննարկվել և ներկայացվում է գիտ.խորհրդի հաստատմանը:

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 3/5

Հաստատել 2023-234ուս տարվա **<<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա >> մասնագիտության առկա ուսուցման համակար IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաները**

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ